«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը:

Առարկան՝Հայոց եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝Թամարա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն
1. Ի՞նչ է առակը
2. Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը
3. Եզրակացություն
4. Օգտագործած գրականության ցանկ

Ներածություն

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սեր ունդներին փոխանցմանը: Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել դպրոցականների հուզաշխարհի վրա: Այս առ ումով հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն հեքիաթները, ինչպես նաև առակները ,որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն,ազնվություն, աշխատասիրություն,ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն: Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին: Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է: Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Դաստիարակչական մեծ նշանակություն ունեն նաև աստվածաշնչյան առակները: Գրական ժանրի առակների և աստվածաշնչյան առակների հիմական տարբերությունն այն է, որ գրական ժանրի առակների հերոսները կենդանիներն ու բույսերն են, իսկ աստվածաշնչյան առակներինը հենց մարդը: Այս աշխատանքի հիմական նպատակն է ուսումնասիրել, թե ինչ դաստիարակչական նշանակություն ունեն աստվածաշնչյան առակները անձի ձևավորման վրա բարոյա-հոգեբանական, գաղափարական տեսանկյունից և ինչ ազդեցություն են ունենում նրա մտածողության և աշխարհընկալման վրա, ինչպես նաև անձ-

քաղաքացու ձևավորման վրա: Եվ արդյո՞ք այս առակների խրատները հասնում են իրենց նպատակին անձի մեջ ներարկելով քրիստոնյային բնորոշ արժանիքներ:Հետազոտական աշխատանքի նպատակն է աստվածաշնչյան առակների միջոցով երեխաների մեջ դաստիարակել բարոյական բարձր արժեքներ, որպեսզի կարողանան տարբերակել աշխարհի չարն ու բարին, կյանքում ուղղորդվեն դրական արժեքներով: Կարևոր է նաև, թե որքանով են նրանք ընկալում առակի ասելիքը, և որքանով են դրանք համարվում արդիական:

Ի՞նչ է առակը

Առակը (առ ակն՝ աչքի առաջ) խրատական բնույթի փոքրածավալ գեղարվեստական ստեղծագործություն է: Առաջացել է ժողովրդական բանահյուսության մեջ, հետո սկսել է մշակվել առակագիր գրողների կողմից: Առակներում հանդես են գալիս ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիներ, բույսեր և այլն: Նրանց միջոցով ծաղրվում են մարդկային վատ սովորույթները, գովաբանվում առաքինությունները: Այլաբանորեն գործածվելով՝ շատ կենդանիներ վերածվել են խորհրդանիշների, օրինակ առյուծը՝ քաջության, հզորության, աղվեսը՝ խորմանկության, էշը՝ հիմարության: Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար

Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները։Նշանավոր առակգիրներ են Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը, ֆրանսիացի Լաֆոնտենը, ռուս Իվան Կռիլովը։

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։ Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը։ Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն։ Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց։ Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը։ Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն։ Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա։ Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է։ Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը։ Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները։ Հայ գրականության մեջ առակագրությունն սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով. դրանք ամփոփվել են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում, որոնք հունարենից թարգմանվել են V–VI դարերում, այլ տվյալով՝ VII դարում։ XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը։ Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները։ Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է (նկարահանվել է մուլտֆիլմ, 1975 թ., Հայֆիլմ)։ Ահա «Իմաստուն զինվորը» առակը «Աղվեսագրքից» Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա

երկու ոտքով կաղ էր։ Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ով ողորմելի, ո՞ւր ես գնում։ Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող» Եվ նա ասաց. «Ով անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու» Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ։ Նշանավոր առակագիրներ են ֆրանսիացի Ժան դը Լաֆոնթենը և ռուս Իվան Կռիլովը։ Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ։

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Աստվածաշունչը կամ Սուրբ Գիրքը քրիստոնյաների նվիրական ու սրբազան գիրքն է: Այն գրել են մարգարեներն ու առաքյալները՝ Աստծու ներշնչմամբ: Հենց այդ պատճառով այն ստացել է Աստվածաշունչ անվանումը: Աստվածաշունչը Աստծու ստեղծագործության պատմությունն է: Այնտեղ ամփոփված են անհիշելի ժամանակներից եկող կյանքի փիլիսոփայությունը, մարդկանց կուտակած վիթխարի կենսափորձը, տիեզերքի և աշխարհի արարման ու պատմական անցքերի վերաբերյալ մեր նախնիների պատկերացումները: Սուրբ գրքի առանձին մասերը կամ գրքերը շուրջ 4 տասնյակ հեղինակներ գրել են 1500 տարվա ընթացքում: Աստվածաշունչը կազմված է Հին և Նոր կտակարաններից: Հին կտակարանը պարունակում է 48 գիրք և գրվել է Հիսուս Քրիստոսի ծննդից առաջ: Հին կտակարանը բաժանվում է 4 հիմնական մասերի՝ Օրենք, որը պարունակում է Հնգամատյանը (Մովսեսի հինգ գրքերը), Պատմական գրքերը, Մարգարեներ և Իմաստասիրական մատյաններ: Հին կտակարանն արարչագործության մասին է. սկզբում Աստված արարել է տիեզերքը՝ երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը, բուսական և կենդանական աշխարհները, ապա՝ առաջին մարդկանց՝ Ադամին ու Եվային, նրանց բնակեցրել դրախտում: Ադամը և Եվան, հետևելով չարի (սատանայի) խորհրդին, մեղանչել են Աստծու դեմ և արտաքսվել դրախտից: Առաջին մեղքի հետևանքով մարդը դարձել է մահկանացու և ավելի ու ավելի հեռացել Աստծուց: Հին կտակարանում խոսվում է մարդու հետ Աստծու ուխտի մասին, Փրկչի մասին, ով պիտի փրկեր մարդկությանը չարի

տիրապետությունից: Փրկչագործությունն Աստվածաշնչի առանցքային թեման է, որով կապակցվում են Հին և Նոր կտակարանները: Հին կտակարանի գրեթե բոլոր գրքերում՝ մարգարեություններում, սաղմոսներում, խոսվում է Փրկչի գալստյան մասին: Նոր կտակարանը գրվել է Քրիստոսի ծննդից հետո՝ առաջին դարում, որով սկսվել է մեր թվականությունը: Նոր կտակարանում՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի Ավետարաններում, պատմվում է Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան, կյանքի, վարդապետության և զոհաբերության մասին: Հիսուս Քրիստոսին աստվածային հղությամբ ծնել է Սուրբ Կույս Մարիամը: Հիսուսն իր վրա է վերցրել ամբողջ մարդկության մեղքը և խաչվել՝ հաղթելով սատանային: Տիրոջ փրկությամբ մարդկությունը միացավ ստեղծողին՝ Արարչին: Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունից հետո նրա աշակերտները՝ առաքյալները, տարածեցին Քրիստոսի փրկության ավետիսը՝ բարի լուրը: Նոր կտակարանում են զետեղված նաև առաքյալների նամակները, որտեղ ամփոփված է Տիրոջ խոսքը՝ ուղղված քրիստոնյաներին, նաև Հայտնությունը, որտեղ պատմվում է աշխարհի վախճանի մասին: Հին կտակարանը գրված է հին եբրայերենով, մասամբ՝ արամերենով, Նոր կտակարանը՝ հիմնականում հին հունարենով: Աստվածաշունչը թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Հայերեն թարգմանվել է V դարում՝ գրերի գյուտից անմիջապես հետո: Թարգմանել են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը և նրանց աշակերտները: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն այնքան բարեխիղճ ու կատարյալ է, որ ֆրանսիացի գիտնական Լա Կրոզը (1661–1719 թթ.) համարել է « Թագուհի թարգմանությանց»: Աստվածաշունչը մեծապես նպաստել է քրիստոնյա ժողովուրդների մտավոր ու հոգևոր զարգացմանը: Աստվածաշնչյան թեմաներով ստեղծվել են գրական և գեղարվեստական բազմաթիվ երկեր: Աստվածաշունչը դաստիարակում է, որ սիրենք Աստծուն ամբողջ սրտով ու ամբողջ էությամբ և սիրենք ընկերոջը, և նրա համար անենք այն ամենը, ինչ ցանկանում ենք, որ մարդիկ մեզ համար անեն:

Աստվածաշնչում տեղ գտած առակներն ունեն իրենց ուրույն մեկնաբանությունը և դաստիարակչական նշանակություն:

Առակաց գիրքն իր ներկայիս տեսքով կազմվել է Եզեկիա թագավորի օրոք: Իմաստալից ասույթների և ուսուցողական խրատների ժողովածու է, որոնցից մեծ մասի հեղինակը Սողոմոնն է, իսկ մյուս մասինը՝ այլ հեղինակներ:

Գրքում տրվում է բազմաթիվ արդիական թեմաների բնութագրում և սահմանում՝ պարունակում է ուսուցողական բովանդակությամբ: Այն կարևոր դեր կարող է խաղալ յուրաքանչյուրի հոգևոր աճի և դաստիարակության գործում: Գրքում տրվում են, օրինակ, արդարության, ամբարշտության, հարստության, աղքատության, ծուլության, կաշառքի և այլ կարևոր թեմաների սահմանումները:

Գրքի հիմնական բովանդակությունը Տիրոջ օրենքն է, որը ըստ եբրայական ավանդության, մինչ Սողոմոնը որևէ մեկը չէր գիտակցում: Առակների գրքից է նաև Մեսրոպ Մաշտոցի կողմից կատարված առաջին հայտնի թարգմանությունը՝ «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակ 1.2):

Ընդհանուր առմամբ՝ գիրքը բաժանված է 3 հիմնական մասերի:

Առաջին մասը բուն առակներին վերաբերող ներածություն է, որը բացատրում է իմաստության դերն ու կարևորությունը մարդու կյանքում: Երկրորդ մասը գրքի կենտրոնական հատվածն է, ինչի պատճառով էլ գիրքը ստացել է հենց այս հատվածի անվանումը: Այս մասում է, որ զետեղված են Սողոմոնի առակները:

Իսկ երրորդ մասը բաղկացած է չորս անկախ հատվածներից, որոնցից երկուսը մեզ փոխանցում են ոչ իսրայելցի իմաստունների մտածումները, ոչ էլ խրատները:

Հարկ է նշել, որ առակների գիրքը պատկանում է գրական այնպիսի ժանրի, որը մեծ ծաղկում է ապրել ամբողջ Հին Արևելքում, որովհետև այնտեղ անհրաժեշտություն էր կյանքում ձեռք բերած սեփական փորձն ու իմաստությունը փոխանցել սերնդեսերունդ:

Ըստ երևույթին, գրքում զետեղված առակները ծնվել են տարբեր ժամանակաշրջաններում:

Առակների գրքի ամենամեծ փիլիսոսայությունն այն է, որ այն բնավ չի շոշափում իսրայելցի ժողովրդի պատմությունն ու ապագային վերաբերող հարցեր, ինչպես անում են Հին Կտակարանի մյուս գրքերը, այլ անհատական մոտեցում է ցուցաբերում յուրաքանչյուր անհատի՝ սերմանելով բարու անհաղթ զորությունն ու աստվածահաճո կյանքի բերկրության գիտակցումը:

Երուսաղէմում Իսրայէլի թագաւոր Դաւթի որդու՝ Սողոմոնի առակները
2 Ճանաչել իմաստութիւնն ու խրատը,
իմանալ հանճարի խօսքերը,
3 ընկալել խօսքի բարդ դարձուածքները,
հասկանալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը՝
4 պարզամիտներին խորագիտութիւն
եւ երիտասարդներին միտք ու հանճար տալու համար.



Մի անգամ դժվար հարցով երկու կին են գալիս Սողոմոնի մոտ: «Մենք երկուսով ապրում ենք նույն հարկի տակ,— բացատրում է նրանցից մեկը,— ես մի որդի ունեցա, իսկ դրանից երկու օր հետո արու զավակ ունեցավ նաև այս կինը: Բայց մի գիշեր նրա որդին մահացավ: Օգտվելով առիթից, որ ես քնած եմ՝ նա իմ կողքից վերցնում է երեխային, ու տեղը իր մահացած որդուն դնում: Երբ ես արթնացա ու նայեցի մեռած երեխային, իսկույն նկատեցի, որ նախիմըչէ»: Այդ ժամանակ երկրորդ կինն առարկում է. «Ո՛չ, ողջ մանուկը իմն է, իսկ մեռածը՝

նրանը»: Առաջին կինը թե՝ ո՛չ, մեռած մանուկը քոնն է, իսկ կենդանին՝ իմը: Եվ նրանք այսպես վիճում են: Ինչպե՞ս պիտի վարվի Սողոմոնը: Նա հրամայում է մի սուր բերել, ապա ասում է. «Ողջ երեխային երկու կտոր արեք. կեսը տվեք մեկին, մյուս կեսը՝ մյուսին»:

— Ո՛չ,— ճչում է իսկական մայրը:— Խնդրում եմ, մի՛ սպանեք նրան, այլ տվեք այդ կնոջը:— Իսկ մյուս կինն ասում է. «Մանուկը ո՛չ ինձ լինի, ո՛չ էլքեզ:Կիսե՛քնրան»: Վերջապես այստեղ Սողոմոնը միջամտում է. «Մի սպանեք երեխային: Տվեք նրան առաջին կնոջը: Նա է իսկական մայրը»: Սողոմոնը գլխի է ընկնում, թե ով է իսկական մայրը, քանի որ վերջինս այնքան է սիրում իր զավակին, որ անգամ պատրաստ է նրան տալու ուրիշին, միայն թե երեխան կենդանի մնա: Երբ մարդիկ լսում են, թե Սողոմոնն ինչպես լուծեց այդ հարցը, շատ են ուրախանում,որ այդքան իմաստուն թագավոր.ունեն:

Սողոմոնը այդ կերպով ցանկանում էր ստուգել, թե ով է իսկական մայրը՝ առաջնորդվելով մայրական հոգու և ինտուիցիայի օրենքով: Եվ դա հաջողվեց: Սողոմոնի իշխանության տարիներին Աստված իր ժողովրդին օրհնում է բարիքների առատությամբ՝ ցորենով, գարիով, խաղողով, թզով և այլ պտուղներով: Ժողովուրդը լավ է հագնվում և ապրում է հարմարավետ տներում: Բոլորն ապրում են առատության մեջ և ոչ մի բանի կարիք չունեն:

Սողոմոն թագավորի առակները գրված են որպես հայր, որը կոչ է անում իր որդուն կյանքի իմաստություն սովորեցնել, թե որ գործողությունները կարող են համարվել ընդունելի Աստծո համար, և որոնք ՝ վատ: Խրատը որդուն, որպես ժառանգ, իսկական հայրիկի համար ամենաթանկ մարդուն նվաճում է նրանց սերն ու հոգատարությունը: Ոչ ոք չի կարող նախատել ծնողին բարոյականացնելու համար ՝ նկատելով, որ իր իսկ որդին հասնելու է մարդկային հարգանքի և Աստծո օրհնության:

Սողոմոնի առակները նրա կյանքի փորձի արդյունքն են, որը նա փոխանցում է ոչ միայն իր ժառանգին, այլև բոլոր այն մարդկանց, ովքեր ցանկանում են ապրել իրենց խաղաղության մեջ և իրենց խղճի հետ ներդաշնակ: Տիրոջ վախը, որը Սողոմոնի առակները կարդացող շատ մարդիկ բառացիորեն ընդունում են, նշանակում է հարգանք և ակնածանք Աստվածային ուխտի հանդեպ, թե ինչպես պետք է ապրեն երկրի վրա գտնվող բոլոր մարդիկ: Սողոմոնի առակների գիրքը մինչ այժմ արդիական

է: Ինտերնետի զարգացման շնորհիվ դուք կարող եք ինքներդ կարդալ հին արքայի հրահանգները առցանց կամ ներբեռնել տեսանյութ համակարգչում կամ սկավառակում: Շատ քրիստոնեական կայքեր հնարավորություն են տալիս առցանց լսելու Սողոմոնի իմաստուն պատվիրանները:

Սողոմոնը պատանի հասակում թագավոր է դառնում: Նա հետևում էր իր հոր՝ Դավթի տված իմաստուն խորհուրդներին: Եհովան հավանում է նրան ու մի գիշեր երազի մեջ հարցնում է. «Սողոմո՛ն, ի՞նչ կուզեիր ինձանից ստանալ»: Ի պատասխան՝ Սողոմոնն ասում է. «Ո՛վ իմ Աստված, ես շատ երիտասարդ եմ ու երկիր կառավարել չգիտեմ: Ուստի, տո՛ւր ինձ իմաստություն, որպեսզի քո ժողովրդին ճիշտ ձևով առաջնորդեմ»:Աստծուն դուր է գալիս Սողոմոնի խնդրանքը: Հետևաբար, նա ասում է. -Քանի որ դու իմաստություն խնդրեցիր ու ոչ թե երկար կյանք կամ հարստություն, ապա դու կլինես այնքան իմաստուն, որքան աշխարհում դեռ ոչ մի մարդ չի եղել: Բայց դրա հետ մեկտեղ ես քեզ կտամ նաև այն, ինչ որ չխնդրեցիր՝ թե՛ հարստություն և թե՛ փառք»:Երբ Սողոմոնը՝ Դավթի որդին, մ.թ.ա. 1037թ.-ին դարձավ Իսրայելի թագավոր, «երեք հազար առակ գրեց»: Նրա իմաստուն խոսքերի որոշ մասն արձանագրվեց Աստվածաշնչի «Առակներ գրքում: Այս առակներում հավիտենական ճշմարտություն է ամփոփված: Դրանք այսօր նույնպես ժամանակահարմար են:

Նոր կտակարանում Հիսուսի առակներն են, որոնք ունեն դաստիարակչական նշանակություն: Հիսուսի առակները գտնվում են Աստվածաշնչի կանոնական ավետարաններում: Դրանք հիմնականում հանդիպում են Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարաններում, որտեղ այս առակներից շատերը կրկնվում են: Մինչդեռ Հովհաննես ավետարանիչը միայն երկու առակ է պատմում՝ «Գազանի և բարի հովվի առակը» 10-րդ գլխում և «Ճշմարիտ որթատունկի առակը» 15-րդ գլխում: Ավետարաններում ընդհանուր առմամբ կարելի է գտնել Հիսուսի 43 առակ:



Հիսուս Քրիստոսն Աստծո խոսքը մարդկանց հասցնում է առակների միջոցով: Նա մարդկանց դաստիարակում է առակներով: Դրանց միջոցով մարդկանց բարոյա-խրատական, դաստիարակչական, ուսուցողական դասեր է տալիս, սերմանում ազնվություն, բարություն, հանդուրժողականություն, համբերություն, խոհեմություն, ազնվություն, արդարություն, աշխատասիրություն, համեստություն, հարգանք միմյանց նկատմամբ , միմյանց օգնել ու պատրաստակամություն: Քրիստոսն իր առակներում խոսում է ճիշտ ու սխալ որոշումների մասին: Նա մեզ սովորեցնում է հեռու մնալ սխալ որոշումներից և կայացնել ճիշտ որոշումներ, որպեսզի չհեռանանք Աստծուց և աստվածային արժեքներից, որպեսզի այդ ճիշտ որոշումները միշտ մեր մտքում լինեն, ու մենք միշտ գործենք ու առաջնորդվենք դրանցով: Մեր մտքերը նվիրենք կարևորագույն ու մնայուն և ոչ թե ժամանակավոր արժեքներին, որոնք կամ անցողիկ են, կամ էլ կործանարար:

Ըստ Քրիստոսի առակների մենք պետք է իմաստուն լինենք և մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, այսինքն ապրենք Նրա Խոսքի համաձայն: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն եւ դժվարություն չի կարող մեզ կործանել: Պետք է Խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող:

Ներկայացնեմ Հիսուսի մի քանի առակ:

Թթխմորի առակի թեման նման է մանանեխի հատիկի թեմային, որն Աստծո արքայության ընդարձակումն է: Հիսուսի կողմից թթխմորի համեմատությունն Աստծո արքայության հետ. դա հիմնականում պայմանավորված է այն ազդեցությամբ, որ խմորիչը արտադրում է ալյուրի մեջ դնելուց հետո: Խմորիչը աճեցնում է խմորի ծավալը: Նույնը տեղի է ունենում, երբ Հիսուսի աշակերտներն ու հետևորդները Հիսուսի ավետարանի բարի լուրը տանում են աշխարհ, ինչը բազմապատկում ու աճեցնում է Աստծո արքայությունը ազգերի մեջ:

Թաքնված գանձի առակը. Մատթեոսի ավետարանից է, որտեղ ասվում է.«Աստծո թագավորության դեպքում տեղի է ունենում նույն բանը, ինչ մի կտոր հողի մեջ թաքնված գանձի դեպքում: Երբ ինչ-որ մեկը գտնում է այն, նորից թաքցնում է՝ հույս ունենալով հողը գնելու և գանձը պահելու համար»:

Այս առակը մեզ ասում է, որ գտնելով Հիսուսին՝ մենք գտնում ենք ամենաթանկ և արժոքավորն գանձը: Այսպիսով՝ արժե վաճառել կամ թողնել այն ամենը, ինչ մենք կարծում էինք, որ արժեքավոր է, որպեսզի ձեռք բերենք կամ թույլ տանք, որ Հիսուսը մտնի մեր սրտերը: Որվհետև որտեղ քո գանձն է՝ այնտեղ կլինի քո սիրտը: Հիսուսն ասում է, որ մենք պետք է փոխենք մեր հին մտածելակերպը, դադարել անհանգստանալ նյութական հարստությունների, նեղությունների, այս աշխարհի հոգսերի և այլնի մասին, որպեսզի կարողանանք հանգստանալ Հիսուսի մեջ,ով մեր ամենամեծ գանձն է:

Ժայռի վրա կառուցել տունը. «Ով որ ինձ մոտ է գալիս և իմ խոսքերը լսելով՝ գործադրում է դրանք, ձեզ ասեմ, թե նա ում է նման: Նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում և հիմքը հաստատում ժայռի վրա: Երբ գետը, հեղեղներից հորդելով, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն. որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: Իսկ ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է կառուցում. երբ գետը զարկում է դրան, այն իսկույն քանդվում է: Եվ ի՜նչ ահավոր է լինում այդ տան կործանումը»:

Ժայռը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է, իսկ ավազը՝ այս աշխարհը: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի վրա, ինչ-որ կառուցել ես, վաղ թե ուշ

փլվելու է:Մենք պետք է իմաստուն լինենք, և մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, այսինքն՝ ապրենք Նրա Խոսքի համաձայն: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն եւ դժվարություն չի կարող մեզ կործանել:Պետք է Խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող:

Հավատի լույսը. «Ոչ ոք ճրագը վառելուց հետո այն չի թաքցնի կամ կաթսայի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա,որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն»[1]:

Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել, որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում, հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որը շատ անգամ խաբուսիկ է:Հիսուս Քրիստոսը լույսը համեմատում է մարդու բարոյական մաքրության, այսինքն՝ բարության, սիրո, ազնվության, իմաստության հետ, և ինչպես մոմը, որ դնում են վերեւում, որպեսզի լուսավուրի շրջապատը, այնպես էլ մարդը իր հոգու լույսը չպետք է թաքցնի, այլ ցույց տա և փոխանցի ուրիշներին:

Անիրավ տնտեսի առակը. Տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի:

[1] Ղուկաս 8: 16-17

Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը։ Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի։ Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր։

Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել։ «Ոչ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող,որովհետև եթե մեկին ատի, մյուսին կսիրի, կամ եթե մեկին մեծարի, մյուսին կարհամարհի: Չեք կարող և Աստծուն ծառայել, և մամոնային»[2]:

Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր, Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով, չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու զղջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Հիսուսը այնպես է սովորեցնում, որ նրանց համար հեշտ լինի հիշել։ Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում։ ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները։ Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար։ Խոնարհ մարդիկ այդպես էլ անում

[2] Ղուկաս ԺՉ 1-13

էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝ մղելով նրանց լսելու: Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ:

Սերմնացանի առակը. Գալիլիայի ծովի ափին Հիսուսի շուրջը հավաքվեց մարդկանց բազմությունը: Նա նավակ մտավ, մի փոքր ափից հեռացավ և մարդկանց հետ առակներով խոսեց. «Ահա մի սերմնացան ելավ սերմանելու, և երբ նա սերմանում էր, մի մաս սերմ ընկավ ճանապարհի եզերքին, և երկնքի թռչունը եկավ և այն կերավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա, ուր շատ հող չկար, և իսկույն բուսավ, քանի որ հողը խորություն չուներ. երբ արևը ծագեց, խանձվեց, և քանի որ արմատներ չկային, չորացավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ փշերի մեջ, ու փշերը բարձրացան և այն խեղդեցին: Եվ մեկ ուրիշ մաս ընկավ պարարտ հողի վրա և պտուղ տվեց. կար որ մեկին հարյուր, և կար ու մեկին վաթսուն, և կար ու մեկին երեսուն»[3]:

Հետո աշակերտներին ասաց. «Իսկ առակն այս է նշանակում. սերմնացանը Քրիստոս է, սերմ Աստծու խոսքն է, որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը ողջ մարդկությունն է, Աստծո խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում: Բոլորն էլ, երբ լսում կամ ընթերցում են Աստծո խոսքը, ստանում են սուրբ սերմերի իրենց բաժինը, բայց թե դրանք ինչպե՞ս կաճեն պայմանավորված է մարդու հոգևոր մակարդակից: Առակում խոսքը 4 տիպի մարդկանց մասին է: Որոնք ճանապարհի եզերքին են, այդ նրանք են, որ լսում են, և ապա սատանան գալիս հանում է խոսքը նրանց սրտից, որպեսզի չհավատան և չփրկվեն: Եվ որոնք ապառաժի վրա են, այդ նրանք են, որ, երբ լսեն, խնդությամբ են ընդունում խոսքը, բայց արմատ չեն բռնում, սրանք միառժամանակ հավատում են, իսկ փորձության ժամանակ հեռանում: Իսկ այն, որ փշերի մեջ ընկավ, այդ նրանք են, որ երբ լսում են խոսքը, աշխարհի հոգսերով, հարստությամբ և զվարճությամբ

[3] Մատթեոս. 13: 4-8

զբաղված լինելով խեղդվում ու անպտուղ են լինում: Իսկ այն, որ պարարտ հողի վրա է, նրանք են, որ բարի և զվարթագին սրտով լսելով խոսքը ընդունում են այն և հարատևելով պտուղ են տալիս»[4]:

Որոմի առակը. Ագարակատերը Հիսուսն է, իսկ ագարակը՝ աշխարհը: Ցորենի սերմերը բարի, իսկ որոմի սերմերը չար մարդիկ են:

Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:

Անառակ որդու վերադարձը. Այստեղ երևում է Աստծու հանդեպ մարդու հիմնական մեղքը՝ անհնազանդություն: Մարդն ուզում է իր կամքը կատարել և թողնում է Աստծուն: գնում է,, հեռու երկիր,, և իր կյանքը մեղքի մեջ անցկացնում:Հորից ստացած ողջ օրհնությունն ու ժառանգությունը վատնեց ու կորցրեց:Նա կարծում էր, թե ազատություն կշահի, բայց իրականում կորցրեց այն՝ մեղքի գերի դառնալով:Հետո խելքի եկավ, գիտակցեց իր դժբախտությունն ու հիմարությունը: Մեր վատ վիճակի գիտակցությունը ապաշխարության տանող առաջին քայլն է:

Հետո նա խոստովանեց իր մեղքը և որոշեց հրաժարվել մեղքից և հոր տուն վերադառնալ:Նրա ապաշխարությունն ամբողջական էր:Ճշմարիտ ապաշխարության մեջ նաև խոնարհություն կա:Ուշագրավ է որդու խոստովանությունը. «Մեղանչեցի երկնքի և քո առաջ» . որևէ մեկի առաջ գործած մեղքը նաև Աստծո դեմ է ուղղված:Ըստ էության բոլոր մեղքերն էլ Աստծու դեմ են:

Հայրը սպասում էր իր կորած որդուն:Նույնիսկ մինչև խոստովանությունը հայրն արդեն իսկ ներել էր որդուն: Տղան արժանի չէր որդի կոչվելու, բայց հայրը վարվեց ոչ թե նրա արժանիքների, այլ իր սիրո և շնորհի

[4] Ղուկ. 8: 11-15

համաձայն:Ահա թե ինչպես է Աստված վարվում բոլոր ճշմարիտ ապաշխարողների հետ:Ինչպես հովիվն ուրախացավ կորած ոչխարը գտնելիս/տուն 6/, այնպես էլ հայրը՝ իր որդուն գտնելիս: Այս առակից պարզ է դառնում Աստծու ողորմությունն ու սերը այն մարդկանց հանդեպ, ովքեր իրեն են գալիս զղջալով:

Փարիսեցիների նման ավագ որդին էլ էր արդար համարում իրեն «Այսքան տարի է քո հրամանները զանց չեմ արել» - ասաց նա. Չէր ուզում իր եղբորը ներել ու սիրել:Նա զայրացած էր հոր վրա և սառնասիրտ էր դարձել:Այժմ մեղավորը, Աստծուց հեռացածը ինքն էր. Նախանձը մեծ մեղք է Աստծու առջև: Հայրը ավագ որդուն էլ էր սիրում.աստծու շնորհին անսահման է: Հայրը բացատրեց որդուն հանդիսության պատճառը, որը բնավ կրտսեր որդուն ավագից առավել պատիվ տալը չէր.իր ուրախությունն էր արտահայտում որդու վերադարձի առթիվ:

Ուշագրավ է նաև հոր համբերությունն ու բարությունը ավագ որդու հանդեպ. Հեզությամբ համոզելը ստիպելուց լավ է:Մեզանից յուրաքանչյուրը «կորած որդի» նույնիսկ, «ավագ եղբայր» է:

Չար մշակների առակը.Այն վեմը, որ կառուցողները անարգեցին, եղավ անկյունաքար.Տիրոջից եղավ այս, և մեր աչքին սքանչելիէ:

Այս առակում ամեն մի դետալ հստակ խորհրդանիշ ունի: Այգին հրեա ժողովուրդն է, այգու տերը՝ Աստված, մշակները այդ օրվա քահանայապետերն են, օրենսգետները, փարիսեցիները, հոգևոր իշխանությունը, որ իր վրա էր վերցրել ժողովրդին հոգևոր սնունդ տալու առաքելությունը, ծառաները բոլոր մարգարեներն են, ցանկապատը օրենքն է,որով հրեա ժողովուրդը կարողացավ պահպանել իր ազգային ինքնությունը, որդին Տեր Հիսուս Քրիստոսն է, որ եկավ հոր կամքով, որից էլ չամաչեցին փարիսեցիները և տարան Գողգոթա և սպանեցին: Վեմը խորհրդանշում է հրեա ժողովրդին, որոնք, գերության մեջ գտնվելով, անարգվել են, բայց նրանցից դուրս եկավ մեսիան, բայց Քրիստոս նկատի ունի իրեն, որ եղավ անկյունաքարը և Տիրոջ կամքով եղավ:Առակը նաև այսօրվա համար է իրական և այսօրվա համար մեծ խորհուրդ, հոգևոր պատգամ ունի: Այն ամենը, ինչ որ ունենք՝ բոլոր հաջողությունները, ձեռքբերումները,

մերը չեն. Տիրոջն են պատկանում: Ի վերջո այգու այս օրինակը ոչ միայն եկեղեցին է խորհրդանշում, այլև մեզանից յուրաքանչյուրի կյանքը, որովհետև մեր կյանքն էլ Աստծու կողմից տրված նվեր է: Ինչպես մշակներին տրվեց այգին մշակելու ոչ թե սեփականացնելու համար, այնպես էլ մեր կյանքը մեզ տրված է կարծես թե վարձով. մենք չենք մեր կյանքի տերը. սա է պատճառը, որ մենք ասում ենք՝ մարդ իրավունք չունի ինքնասպանություն գործելու: Մենք մեր կյանքում տեսնելու ենք աղքատ, ընչազուրկ, հիվանդ, մխիթարության կարոտ մարդկանց, ում պետք է օգնության ձեռք մեկնել, ում մեր նվաճումներից, մեր ձեռքբերումներից՝ հոգևոր թե նյութական,պետք է մի բան հատկացնել, որովհետև մերը չէ այս ամենը: Քրիստոս այս առակում սքանչելի կերպով ներկայացնում է Աստծու համբերատարության չափը: Ինչպես առակում մշակներին, այնպես էլ մեզ առաջին սխալը գործելուց հետո Աստված իր գթասրտությունից, բարեսրտությունից ելնելով, հնարավորություն է տալիս արժանի մշակ լինելու:

Փարիսեցու և մաքսավորի առակը «Փարիսեցին առանձին կանգնած այս էր աոթք անում. Ով Աստված, գոհանում եմ քեզանից, որ չեմ ինչպես ուրիշ մարդիկը՝ հափշտակող, անիրավ, շնացող, կամ ինչպես էլ այս մաքսավորը. Շաբաթը երկո անգամ ծոմ եմ պահում, և իմ բոլոր ստացվածքներից տասանորդ եմ տալիս։ Եվ մաքսավորը հեռո կանգնած իր աչքերն էլ չէր կամենում դեպի երկինք բարձրացնել. Այլ իր կուրծքը ծեծում էր և ասում. Ով Աստված, ողորմիր ինձ մեղավորիս…[5]: Ինչո՞ւմ էր կայանում այս երկուսի տարբերությունը, և կա՞ն արդյոք այսօր փարիսեցիներ ո մաքսավորներ: Փաիսեցու աղոթքի գլխավոր հերոսն ինքն էր՝ փարիսեցին, որ անում էր ինչ-որ բաներ, իսկ մաքսավորի աղոթքի հերոսը Աստված էր, որ պիտի ներեր ո ողորմեր: Փարիսեցու հայացքն ուղղված էր իր անձին և իր գործերին, իսկ մաքսավորը, թեև հայացքը վերև էլ չէր բարձրացնում, բայց հասկանալի է, որ այն ուղղված էր Աստծուն: Փարիսեցին հպարտանում էր ո ինքն իրեն բարձրացնում, մաքսավորը՝ ցածրանում ո խոնարհվում: Այսօր մարդկությանը կարող ենք բաժանել երկո մասի. Ներսի մասին հոգ տանող մարդկանց, որի օրինակը մաքսավորն էր, Դրսի մասին հոգ

[5] Ղուկաս 18:11-13

տանող մարդկանց, որի օրինակը փարիսեցին էր: Դրսի մասին հոգ տանելը վատ չէ, պարզապես այն բավարար չէ: Շատ լավ էր, որ փարիսեցին գիտեր օրենքը, պահում էր այն, տասանորդ էր տալիս, սակայն դա բավարար չէր… Աստծո հայացքը նախ և առաջ ուղղված է մեր սրտին, և ում-ում, բայց Աստծուն խաբել երբևէ չենք կարող: Մատթևոս 5:20, 23:13 – Այս խոսքերը փաստում են, որ փարիսեցիները (կամ կեղծավոր մարդիկ) փրկություն չունեին, ուստի սա լուրջ ահազանգ է ինձ ո քեզ, որ գանք Աստծո առաջ անկեղծությամբ:

Այս առակները նպատակահարմար է մատուցել բազմազան մեթոդներով, այն է՝ կանխագուշակման մեթոդ, ԳՈՒՍ աղյուսակ, Т-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, բազմաթև աղյուսակներ և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, առակների, մասնավորապես աստվածաշնչյան առակների ուսուցողական ու դաստիարակչական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել ոչ միայն երեխայի, այլև մարդու որպես անձ-քաղաքացու ձևավորման համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են: Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից,եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առածների,ասացվածքների կիրառմամբ Դասը, հաճախակի համեմվելով աստվածաշնչյան առակներով, կդառնա ավելի հետաքրքիր, հագեցած ու տեսանելի,իսկ աշակերտները կդառնան բարձր արժեհամակարգի տեր մարդիկ, կուղղորդվեն բարոյական սկզբունքներով և արժեքներով:

Առակները մեծ ճանաչողական արժեք ունեն: Նրանք ժամանակին հոգևոր սնունդ են տվել ընթերցողին և ունկնդրին: Դրանք կարևոր աղբյուր են

ժամանակի կյանքի բազմաթիվ այնպիսի կողմերի լուսաբանման համար, որոնց մասին լռում են մատենագրական մյուս հուշարձանները:

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում անչափ կարևոր են մարդասիրության, հայրենասիրության, ազնվության, արդարամտության, քրիստոնեական հավատի վերաբերյալ աստվածաշնչյան պատվիրանները, որոնք գրականության սնուցող կենարար աղբյուրներից են: Աստվածաշունչը շարունակում է պահպանել հասարակական մտածողության ձևավորման վրա ունեցած իր անգնահատելի ազդեցությունը՝ սերմանել սիրո ու բարու թյան հունդեր: Այդ պատճառով աստվածաշնչյան առակները միշտ արդիական են, սիրելի և ընկալելի:

Անտարակույս է, որ աստվածաշնչյան աշխարհայեցողությունն առանձնակի կարևորություն ունի մատաղ սերնդի հայրենասիրական, մարդասիրական, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման գործընթացներում: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առաջադրում է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման իր խնդիրներն ու նպատակները, եղանակներն ու մեթոդները, ճշգրտում արժեհամակարգային չափանիշները: Սակայն կան չափանիշներ, որոնք միշտ կենսունակ են ու առաջնային ցանկացած ժամանակաշրջանի համար: Հատկապես մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպման գործընթացներում դրանք մշտական են և հույժ կարևոր մեր օրերում:

Ինչ վերաբերում է աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությանը, ապա պետք է նշեմ, որ միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ

նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը: Այդ առակների շնորհիվ վստահաբար կարելի է ասել, որ կմաքրվեն յուրաքանչյուրիս մտքերն ու հոգիները, սրտերը կազնվանան ու կբարիանան, հարգանքն ու սերը,արդարությունն ու խոհեմությունը ուղեկից կլինեն բոլորիս մեզ տրված կյանքն ապրելու քրիստոնյային արժանավայել կերպով:Աստվածաշնչյան առակները երբեք չեն կորցրել իրենց արդիականությունը և արդիական կլիենեն բոլոր սերունդների ու նրանց քրիստոնեական դաստիարակության վրա:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006

2. Աստուածաշունչ Մատեան Հին ու Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, 2004

3. Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին,1997

4. Հայոց Եկեղեցու պատմություն,դասագիրք,Երևան 2014

5. Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն,Հիսուսի առակները

6. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%AF

7. Qahana.am կայք